

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և
Թուրքմենստանի կառավարության միջև առևտրատնտեսական
համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և
Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
գիտակցելով առևտրատնտեսական հարաբերությունների
կարևորությունը Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի միջև,
ելնելով երկու երկրների միջև փոխշահավետ, բազմակողմանի
հարաբերությունների ստեղծմանը նպաստելու մտադրությունից,
առաջնորդվելով փոխադարձ տնտեսական կապերն իրագործելիս
իրավահավասարության, փոխադարձ շահի և միջազգային իրավունքի
սկզբունքներով,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Կողմերն իրար կտրամադրեն առավելագույն բարենպաստության
պայմանակարգ՝ մաքսատուրքերի և այլ գանձումների, ինչպես նաև
ապրանքների արտահանման և ներմուծման ու ծառայությունների դեպքում
նման մաքսատուրքերի և գանձումների գանձման եղանակի նկատմամբ:

2. Կողմերը պայմանավորվեցին, որ առավելագույն
բարենպաստության պայմանակարգը չի տարածվում, մասնավորապես,
այն արտոնությունների և առավելությունների վրա, որոնք Կողմերից մեկը
տրամադրում է կամ ապագայում տրամադրելու է՝

ա) հարևան պետություններին՝ սահմանային առևտուրը թեթևացնելու
նպատակով,

բ) այն պետություններին, որոնք նրա հետ միասին մտնում են արդեն
գոյություն ունեցող կամ ստեղծվելիք մաքսային միության կամ ազատ
առևտրի գոտու մեջ,

գ) երրորդ երկրներին՝ բազմակողմ պայմանավորվածությունների
շրջանակներում, որոնց չի մասնակցում մյուս Կողմը:

Հոդված 2

Կողմերը որոշեցին, որ առևտրատնտեսական հարաբերությունները
պետք է զարգանան Կողմերի սուբյեկտների և պետական կառավարման
մարմինների միջև, նրանց իրավասության սահմաններում՝ նրանց միջև

կնքված կոնտրակտների, պայմանագրերի, համաձայնագրերի կամ արձանագրությունների հիման վրա:

Հոդված 3

Կողմերը կառավարությունների մակարդակով կիրականացնեն կարևորագույն արտադրատեսակների, ապրանքների և ծառայությունների մատակարարումների կարգավորումը: Ապրանքների ու ծառայությունների անվանացանկը և ծավալները սահմանվելու են Կողմերի կառավարությունների կողմից լիազորված մարմինների կողմից ստորագրվող ամենամյա արձանագրություններով:

Հոդված 4

Կողմերն ամեն կերպ կաջակցեն առևտրի և տնտեսական ու տեխնիկական համագործակցության այլ տեսակների զարգացմանը՝ երկարաժամկետ և փոխշահավետ հիմքի վրա: Այդ նպատակով Կողմերը՝

կաջակցեն օբյեկտների միջև անմիջական առևտրական, տնտեսական և տեխնիկական համագործակցությանը արդյունաբերության ու արտադրության, գիտության և հետազոտական աշխատանքների բոլոր բնագավառներում,

կապահովեն բարենպաստ պայմաններ ներդրումների իրականացման, համատեղ ձեռնարկությունների ստեղծման, տնտեսական և առևտրական տեղեկության, առևտրական և այլ կազմակերպություններ ներկայացնող պատվիրակությունների փոխանակման, ինչպես նաև սեմինարների, գիտաժողովների, ցուցահանդեսների ու տոնավաճառների կազմակերպման և անցկացման համար:

Հոդված 5

Կողմերը պայմանավորվեցին անհրաժեշտության դեպքում թույլատրել իրենց տարածքում մյուս Կողմի առևտրական ներկայացուցչությունների ստեղծումը:

Հոդված 6

Կողմերի միջև հաշվարկներն ու վճարումները իրականացվելու են ազատ փոխարկելի արժույթով՝ միջազգային առևտրական պրակտիկայում ընդունված պայմաններով:

Կողմերի լիազորված մարմինների համաձայնությամբ հաշվարկներն ու վճարումները կարող են կատարվել նաև այլ ձևերով՝ յուրաքանչյուր երկրում գործող օրենսդրության համաձայն:

Հոդված 7

Բեռնափոխադրումների, մաքսային ձևակերպումների, տրանսպորտի երթևեկության, այդ թվում՝ բեռների և ուղևորների տարանցիկ փոխադրումների կարգը և պայմանները, ինչպես նաև տրանսպորտային համակարգերի փոխգործողությունը սահմանվելու են Կողմերի իրավասու մարմինների կողմից ստորագրված երկկողմ համաձայնագրերով:

Հոդված 8

Կողմերը համաձայնեցին անհապաղ խորհրդակցություններ անցկացնել Կողմերից մեկի խնդրանքով, եթե մյուս Կողմի տարածքից ծագող, արդեն իրականացված կամ իրականացվելիք ապրանքների ներմուծումն առաջացնի կամ սպառնա առաջացնել կամ էլ զգալի չափով նպաստի շուկայի խախտմանը:

Սույն հոդվածի համաձայն միջոցներ ընտրելիս Կողմերն առաջնությունը տալու են այն միջոցներին, որոնք նվազագույն բացասական ազդեցություն կունենան սույն Համաձայնագրի նպատակների իրագործման վրա:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ժամանակ ծագած վիճելի հարցերը կլուծվեն բանակցությունների ճանապարհով, միջազգային իրավունքի նորմերի պահպանմամբ:

Հոդված 10

1. Կողմերը համաձայնեցին պարբերաբար խորհրդակցություններ անցկացնել իրենց լիազոր մարմինների միջոցով՝ սույն Համաձայնագրի կատարման ընթացքը քննելու համար:

2. Կողմերն անհրաժեշտ գտան, Կողմերից մեկի խնդրանքով, համապատասխան ուղիներով անցկացնել խորհրդակցություններ՝ սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կատարմանը և Կողմերի միջև հարաբերությունների այլ կողմերին վերաբերող հարցերի քննարկման համար:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում յուրաքանչյուր Կողմի օրենսդրությանը համապատասխան և կգործի մինչև վեց ամիս լրանալը՝ այն օրից սկսած, երբ Կողմերից մեկը մյուս Կողմին գրավոր կժանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Ազգաբաժնի քաղաքում 1993 թվականի դեկտեմբերի 24-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ համազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի մարտի 1-ից: